

4.

ԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ECOLOGY
ЭКОЛОГИЯ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՈՒԽԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՏԵՂԱԲԱՇԽԱՍԱՆ
ԱՌԱՆՋԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՈՒ ՊԱՐՊԱՍՄԱՆ ՈՒՂԻՆՆԵՐԸ

Մ. Պ. ԱՎԱԳՅԱՆ

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,
ԳՊԴ բնագիտական ֆակուլտետի դեկան

Երկրի վրա աճող բոլոր բույսերը միասին վերցրած՝ տարեկան սինթեզում են ավելի քան 375 միլիարդ տ օրգանական նյութեր (չոր նյութի հաշվով), որոնք մեր մոլորակի բնակիչների՝ մարդկանց, կենդանիների և միկրոօրգանիզմների սննդի միակ աղբյուրն են: Այդ գործընթացում մթնոլորտից յուրացվում է 650 մլրդ տ ածխաթրու գազ, հողից՝ 5 միլիարդ տ ազոտ, շուրջ 1 մլրդ տ ֆոսֆոր և 10-15 մլրդ տ հանքային այլ տարրեր: Այդ բոլորի փոխարեն մթնոլորտը հարստանում է 350 մլրդ տ ազատ թթվածնով:

Ժամանակակից հասարակության զարգացումը սակայն պայմանավորված չէ միայն մեզ շրջապատող բույսերի կենսագործունեությամբ: Բուսական աշխարհն իր գոյության միլիոնավոր տարիների ընթացքում երկրի ընդերքում ծևավորել և պահպանել է հսկայական քանակությամբ էներգիայի ռեզերվ՝ նաև, քարածուխ, գազ, տորֆ և այլն: Այսօր արտադրողական ուժերի զարգացման մակարդակի գլխավոր ցուցանիշներից մեկն այն է, թե ինչպիսի արդյունավետությամբ են օգտագործվում բույսերի կողմից միլիոնավոր տարիներ առաջ սինթեզված և այժմ էլ սինթեզվող էներգիայի հարուստ պաշարները:

Բուսականության դերը միայն այսքանով չի սահմանափակվում: Բույսերը կարգավորում են երկրագնդի ջրային ռեժիմը, կանխում հողի էրոզիան, բարելավում բնակավայրերի սանիտարահիգիենիկ պայմանները:

Չնայած բուսականության այսքան կարևոր, բազմակողմանի նշանակությանը, մարդու գործունեության հետևանքով, հատկապես վերջին հարյուրամյակներում, խախտվել են բուսական ծածկոցի զարգացման բնականոն օրինաչափությունները, և երկրագնդի երեսից սկսել են անհետանալ ոչ միայն բույսերի առանձին տեսակներ, այլև ամբողջ ֆիտոցենոզներ: Բանն այն է, որ

բուսական աշխարհի պահպանության խնդիրները պահանջում են առաջին հերթին չխախտել բնության բիոգեոցենոլոգիական ամբողջականությունը և պահպանության տակ վերցնել ոչ միայն առանձին բույսեր ու կենդանիներ, այլև բիոգեոցենոզների բոլոր՝ ինչպես ինքնասում (ավտոտրոֆ), այնպես էլ տարածուն (հետերոտրոֆ) օրգանիզմները և անկենդան բաղադրիչները:

Դամաշխարհային ֆլորայի գենոֆոննի պահպանաման խնդիրը ներկայում ունի բնապահպանական և տնտեսական նշանակություն: Մեզ շրջապատող բուսական աշխարհի հազարավոր տեսակներ, որոնք ստեղծվել են միլիոնավոր տարիների ընթացքում և անհիշելի ժամանակներից ի վեր օգտագործվել մարդու կողմից, ներկայում գիտության և տեխնիկայի զարգացման հզոր վերելքների պայմաններում ոչնչանում են: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել ապացուցելու համար այն փաստը, որ դեկորատիվ, բուժիչ, համեմունքային և բազմաթիվ այլ օգտակար բույսերի անկանոն հավաքը, թունաքիմիկատների օգտագործման չարշահումը, արոտների գերարածեցումը ի վերջո տանում են բազմաթիվ արժեքավոր բուսատեսակների ոչնչացման:

Բուսական աշխարհի պահպանության խնդիրներն առավել հրատապ ու կարևոր են մեր հանրապետությունում, որտեղ ընդամենը 30 հազար քառակուսի կիլոմետրի վրա կենտրոնացած է բուսական տեսակների չափազանց մեծ բազմազանություն, որոնց մի մասը չի հանդիպում երկրագնդի այլ տարածաշրջաններում:

Հայաստան աչքի է ընկնում ոչ միայն տեսակային կազմի մեծ հազեցվածությամբ և էնդեմիկ տեսակների առատությամբ, այլև առանձին տեսակների սահմանափակ տարածվածությամբ:

Որոշ տեսակների տարածման արեալն ընդգրկում է միայն մի քանի քառակուսի կիլոմետր, և բնակչության մեծ խտության ու մարդու տնտեսական գործունեության հետևանքով դրանցից շատերը կարող են խսպառ վերանալ: Դետևաբար, բուսական ծածկոցի պահպանության խնդիրները մեր հանրապետությունում առավել հրատապ ու կարևոր են:

Մեր հանրապետության հարուստ բուսածածկոցի պահպանության հարցերը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է լավ ճանաչել բուսական տարրեր տիպերը, համակեցությունը, դրանց բաղադրիչ տարրերը, պահպանության վիճակը, հեռանկարները:

Չնայած բուսական ծածկոցի ոչ մեծ խտությանն ու տեսակային կազմի համեմատական աղքատությանը, անապատային բուսականության մեջ կան որոշ հազվագյուտ տեսակներ, որոնք կարևոր արժեք են ներկայացնում գիտության համար:

Կիսաանապատների հսկայական տարածություններ վերածվել են կուլ-տուրական լամփշաֆտների: Կիսաանապատային բուսականության կազմում բավականին շատ են ուտվող (սիրեխ, թրթնջուկ, կապառ), դեղատու (կուսա-ծաղիկ) բույսերը: Ընդհանրապես այս բուսական ֆորմացիան պարունակում է մեծ քանակությամբ օգտակար բույսեր: Դատկապես ուշադրության արժանի են Արովյանի, Գառնիի, Վաղաճածորի կիսաանապատները, որտեղ հանդիպում են վայրի ցորենի, գարու և աշորայի բուսութներ: Պարզվել է, որ վայրի ցորե-նի համաշխարհային ֆոնդի 650 այլատեսակներից 230-ը աճում է Դայաստա-նում:

Կիսաանապատային գոտու բուսատեսակների շարքում հանդիպում են այնպիսիները, որոնք դարեր շարունակ օգտագործվելով բնակչության կող-մից՝ բնական հանակեցություններից աստիճանաբար անհետանում են: Այս-պես, օրինակ, շնամեռուկը, որը բնակչության կողմից օգտագործվում էր որ-պես դեղամիջոց՝ սրտի, երիկամների և միզափամփուշտի մի շարք հիվան-դությունների բուժման նպատակով, իսպառ ոչնչացել և անհետացել է մեր հանրապետության բուսածածկոցից:

Անապատա-կիսաանապատային արոտավայրերի ներկա վիճակը չափա-զանց անմիտար է: Դրանք քայլայված են, աղտոտված վնասակար և բունա-կոր բույսերով: Բանն այս է, որ ամկամու արածեցման և ամբավարար իման-քի հետևանքով արժեքավոր կերային բույսերն արագ կերպով իրենց տեղը զիջում են անարժեք և վնասակար, երբեմն նաև թունավոր բույսերին:

Երբեմն, նույնիսկ ամենաանշան ազդոտեխնիկական միջոցառումների կիրաօնամբ իսկ, հնարավոր է բարելավել այս գոտու արոտավայրերը: Փոր-ձերը ցույց են տվել, որ նույնիսկ քարերի հավաքը արոտավայրերի արդյունա-վետությունը բարձրացնում է 34%-ով, իսկ 60-ական կա ֆուֆորով, կալիումով և ազոտով պարարատացնելու դեպքում արոտավայրերի բերքատվությունը բարձրանում է ավելի քան երկու անգամ: Դեռ ավելին, պարարտացման դեպ-քում զգալիորեն փոխվում է նաև բուսականության տեսակային կազմը:

Արոտավայրերը միշտ բարվոր վիճակում պահելու և վաղ գարնանային արածեցման ազդեցությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել արոտաշրջանառություն՝ արոտների հերթափոխային (զագոնային) օգտա-գործնամբ:

Դայաստանի տափաստանային բուսականությունը մյուս տիպերի համե-մատությամբ, ամենից ավելի է տուժել անթրոպոգեն գործոններից: Տափաս-տանները մեր գյուղատնտեսության ոսկե ֆոնդն են, սակայն դրանց տարա-ծությունները տարեցտարի կրծատվում են, քանի որ վերածվում են մշակովի հողերի:

Հանրապետությունում անասնապահության բուռն զարգացման ներկա փուլում ալպյան մարզագետինների արդյունավետ օգտագործման ու պահպանության հարցը խիստ արդիական է:

Ալպյան բուսածածկերի անկանոն արածեցումը բացասաբար է անդրադառնում բուսազանգվածի որակի և քանակի վրա: Առավել օգտակար բուսատեսակների քանակը տարեցտարի պակասում է՝ իր տեղը զիջելով փշոտ, թունավոր և ցածրարժեք բույսերին՝ տատասկներին, հրանունկներին, ոչլախոտին, գայլաթարին և այլն:

Նյայաստանի լեռնային մարզագետինների տարածքում էրոզիոն պրոցեսների բուռն զարգացման հիմնական պատճառներից մեկը թեք լանջերում գտնվող շուրջ 60 հազար հեկտար բնական արոտավայրերի հերկումն էր, որի հետևանքով քայլավեց հողը հուսալի կերպով լվացումից պահպանող բազմադարյան ճնածածկույթը:

Տարբեր չափով էրոզացված արոտավայրերում բուսածածկի խտությունը բարձրացնող և հողի լվացումը կանխող ամենաարդյունավետ միջոցառումներն են՝ արածեցման արգելումը (մարզագետիններին հանգիստ տալու համար), պարարտացման միջոցով՝ մարզագետինների սննդային ռեժիմի բարելավումը, պայքարը մոլախտային բուսականության դեմ, հանդամիջյան ճանապարհների բարեկարգումը, ջրարդիացման ցանցի բարելավումը, խոտախառնուրդների ցանքը և այլն:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, կերային տարածությունների պահպանման լավագույն միջոցը ռացիոնալ խոտհունն է և անասունների արդյունավետ արածեցումը: Յարկավոր է անասուններին արածեցնել միայն մեկ անգամ, որից հետո թողնել, որ արոտների խոտածածկը վերականգնվի: Որոշ ժամանակ անց (շուրջ 20 օր հետո) կարելի կլինի արածեցնել երկրորդ անգամ, ապա նույն կարգով՝ երրորդ անգամ և այլն: Յաջորդական արածեցման այսպիսի համակարգում պետք է կիրառել, այսպես կոչված, բաժնային արածեցումը, այսինքն՝ ամեն օր արոտամասում որոշ բաժին առանձնացնել անասուններին բավարար չափով կերակրելու համար:

Խոտհարքերն ամեն տարի միևնույն ժամկետներում հնձելու պատճառով հաճախ արժեքավոր խոտարույսները շարքից դուրս են գալիս, և նրանց տեղը գրավում են ցածրարժեք մոլախտերը, որոնք տարեցտարի իջեցնում են խոտհարքերի արտադրողականությունը և վատացնում նրանց արժեքը: Այդ բացասական երևույթի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է ամենուրեք իրագործել խոտհարքաշրջանառություն՝ խոտհարքերն օգտագործելով

ըստ տարիների, առանձին տեղամասերով և տարբեր ռեժիմներով: Որոշ, դեռևս վերջնականապես շարքից դուրս չեկած արոտավայրերում խիստ տղորված բուսածածկը վերականգնելու համար անհրաժեշտ է 2-ից մինչև 5 տարի արգելել անասունների արածեցումը:

Դամալիր միջոցառումների շնորհիվ (պարարտացում, ենթացանք և այլն), խոտի բերքի բարձրացման հետ միասին բարելավվում է նաև խոտածածկույթի բուսաբանական և քիմիական կազմը, բարձրանում է խոտի սննդարժեքը, պակասում են ցածրարժեք, մոլախոտային բույսերը, արոտավայրերի մերկացած տարածությունները ծածկվում են բուսականությամբ, և երկարածգվում է արոտային շրջանը:

Ալպյան արոտների գերենվածությունն իջեցնում է բույսերի ոչ միայն որակական արժեքը, այլև քանակական ցուցանիշները:

ճահճային բուսականությունը մեր հանրապետությունում լանդշաֆտային բնույթ չի կրում, այլ փոքրիկ զանգվածներով հանդիպում է բոլոր գոտիներում, հատկապես գետերի ու լճերի մերձափնյա մասերում, ծորերում ու գրունտային ջրերով հարուստ լեռնային ու ցածրադիր հարթություններում՝ զբաղեցնելով 20 հազար հեկտար տարածություն: Հանրապետության ճահճներն աչքի են ընկնում բուսական խմբավորումների մեջ բազմազանությամբ: Այստեղ հայտնաբերված են 417 ջրածահճային բույսեր, որոնցից լայնորեն տարածված են բոշխերը (40 տեսակ), որձախոտերը, կնյունները, ճլախոտերը, ապուզանը, կիզախոտը, եղեգը և այլն: Դրանց թվում կան մի շարք օգտակար բույսեր. դեղատու (խմնեղեզ, տուղտ, կարապածաղիկ, քաղցրարմատ), կերային (որդանախոտ, դաշտավլուկ, սեզ), եթերայուղատու (դաղձ, խորդենի), դարաղանյութեր պարունակող (թթվածուկ, ոսկեծաղիկ, արկաքուրիկ), ներկատու, ուտելի և այլն: Դայաստանի լեռնային շրջաններում գտնվող ճահճները բացի բուսական հումքից նաև բարձրորակ տորֆի հսկայական պաշարներ են պայունակում:

Այսպես, օրինակ, մեր հանրապետությունում հանդիպում են շուրջ 10 մեծ ու փոքր տորֆային զանգվածներ ծովի մակերևույթից 1400-2800 մետր բարձրության վրա: Միայն Վարդենիսի շրջանի «Գիլի» տորֆային զանգվածը ընդգրկում է 1500 հեկտար տարածություն: Տորֆաշերտի հաստությունն այս-տեղ հաճախ կազմում է նույնիսկ 6-8 մ:

Բուսական աշխարհի արտակարգ խայտարղետությունը արգասիք է երկրակեղեկի բարդ կառուցվածքի, կիմայի, հողի բազմազանության, ռելիեֆի խիստ տատանումների և, որ ամենակարևորն է, ֆլորագեննետիկական տեսակետից նպաստավոր աշխարհագրական դիրքի:

Սակայն այս կամ այն երկրի բուսական աշխարհի հարստության չափանիշը ոչ միայն բուսական համակեցությունների բնական բազմազանությունն է, այլև բուսատեսակների կամ ֆլորայի կազմը: Պեսոր է նշել, որ այս հատկանիշներով ևս Հայաստանն աչքի է ընկնում: Ներկայում հանրապետությունում հայտնաբերված է բարձրակարգ բույսերի 200 ընտանիք և ավելի քան 3200 տեսակ: Ծաղկավոր բույսերին չեն գիտում նաև սպորավոր բույսերը՝ մամուռները, բարաքոները, ջրինուռները և սնկերը, որոնց ծշգրիտ քանակը դեռևս պարզված չէ:

Գոյություն ունեն բուսականության պոտենցիալ հարստությունը բնորոշող այլ ցուցանիշներ ևս: Դա բուսաշխարհագրական տեսակետից մեծ արժեք ներկայացնող բուսատեսակների՝ ռելիկտների և էնդեմիկների առկայությունն է: Հայաստանն աչքի է ընկնում ֆլորայի ինքնատիպության այս առանձնահատկությամբ ևս: Նշենք, որ Հայաստանում գիտության համար առաջին անգամ Ակարագրվել է 400 տեսակ, որոնցից 225-ը տարբեր ժամանակներում հայտնաբերվել են հարևան երկրներում՝ Աղբքացանում, Վրաստանում, Թուրքիայում և Իրանում: Մնացած 175-ը մեր բնաշխարհի մենաշնորհն է, այսինքն հանդիպում են միայն Հայաստանում և օտար են երկրագնդի մնացած բոլոր շրջանների համար:

Հայաստամի առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող էնդեմներից հիշատակության արժանի են նուռը, Թանամշյանի օշանը, Թախտաջյանի կարնուկը, Տիգրանի բանքրվենին, Մաղաքյանի Ստելերիան, Տուրմեֆորի գունդելիան: Ռելիկտներից՝ մրտավարող, պարիսյակը, արջատիլենին, ունարին, կենին, սպիտակ և դեղին ջրաշուշանները և այլ բույսեր:

Ինչպես էնդեմները, ռելիկտները ևս ունեն շատ սահմանափակ տարածում, էկոլոգիապես դժվար հարմարվող են և մարդու չնտածված գործունեության ընթացքում արագ ոչնչանում են: Դրանք բնությունից ժառանգած անգնահատելի գանձեր են, որոնց պահպանությունը կարևորագույն խնդիրներից մեկն է: Մարդկությանն առանձնապես մեծ ծառայություն կարող են մատուցել կուլտուրական բույսերի վայրի ցեղակիցները՝ վայրի ցորենը, գարին, աշորան, ճակնդեղը, ոլոռը, սիսեռը, կորնզանը, առվույտը, սոխը, վուշը, խնձորենին, տանձենին, ընկուզենին: Վերջին ժամանակներս Մեղրու շրջանում հայտնաբերվել են նաև վայրի ծմերուկ: Կուլտուրական բույսերի վայրի ցեղակիցները բարձր բերքատու, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն սելեկցիոն սորտեր ստանալու համար անփոխարինելի ծնողական ծևեր կարող են լինել:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացումն անքակտելիորեն կապված է նաև բուսական ռեսուրսների լայն ու նպատակասլաց օգտագործման հետ:

Հայաստանի ֆլորան և բուսականությունն անասնաբուծական, դեղագործական, սննդի, ներկանյութերի, եթերայուղերի, վիտամինների, համեմունքների և բազմաթիվ այլ օգտակար նյութերի ստացման անսպառ շտեմարան է: Սակայն միջոցների արտադրությամբ չի սպառվում բուսական աշխարհի բնական պոտենցիալը: Այն օժտված է սանհիտարահիգիենիկ, ջրակարգավորիչ և հակաերողիոն հատկանիշներով: Բուսականության պարզևած գեղագիտական անգնահատելի արժեքը չի գիտում նրա տված բազմաթիվ բարիքներին:

Սակայն պետք է նշել, որ հանրապետության բուսականության հարուստ գենոֆոննի արդի վիճակն անհանգստացնում է բուսաբաններին: Հայաստանում թերևս միայն ծառերի ու թփերի պահպանությունն է շատ թե քիչ ապահովված, որը պայմանավորված է հիմնականում անտառային տիպի արգելոցների և արգելավայրերի առկայությամբ:

Արդյունաբերության և տեխնիկայի զարգացումն անուղղակի վճասներ է հասցնում կենդանի բնությանը: Այդ պրոբլեմը ներկայումս մտահոգում է ողջ աշխարհի առաջադեմ հասարակությանը: Բնությանը հասցված նման վնասներն անխուսափելի են նաև Հայաստանի նման փոքր երկրի համար, որտեղ անճախաղեապ մասշտաբի շինարարական աշխատանքներ են կատարվում, և արդյունաբերական ծեռնարկությունները, բնակելի շենքերն ու ջրամբարներն անընդհատ ավելանում են: Ընդարձակելով ցանքատարածությունները, մարդու անխուսափելիորեն ոչնչացնում է կուսական բնության նորանոր հատվածներ՝ ճահիճներ, մարգագետններ, տափաստաններ, անապատներ և այնտեղ դարեր ի վեր բնակվող բույսերն ու կենդանիները:

Ներկայումս աշխարհի բոլոր առաջավոր երկրներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ կազմվում են հազվագյուտ և անհետացող բույսերի ցուցակներ, «Կարմիր գիրք», որոնք անհանգստության և օգնության շեփոր են տագնապում ոչնչացված կամ բնաջնջման եղին գտնվող վայրի բույսերի համար: ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի աշխատակիցների ջանքերով կազմվել է նաև Հայաստանի հազվագյուտ և անհետացող բույսերի ցուցակը: Այն ընդգրկում է շուրջ 400 տեսակ, որը կազմում է Հայաստանի ֆլորայի մոտ 12 տոկոսը: «Կարմիր գրքում» ընդգրկված բոլոր բույսերն էլ շատ սահմանափակ տարածում ունեն՝ մեկ-երկու կամ հազվադեպ երեք բնակատեղի: Բավական է մարդու կողմից ևս անզգույց միջանալություն (թեք լանջերն ի վար նոր ջրամ-

բարի կառուցում, գազամուղի անցկացում կամ պայթեցում և այլն), որպեսզի բնաջնջվեն այդ բույսերի վերջին հանգրվանները, ապաստանները: Հայաստանում արդին կամ երկու տասնյակի հասմող ոչնչացված տեսակներ, այդ թվում՝ խնկարույսը, ելաբույսը, տետրադիլիսը, աղասեր թրաշուշանը, դեղին ջրաշուշանը, աղասեր աստղածաղիկը և այլն:

Տիսուր իրողություն է, բայց փաստ է, որ Հայաստանի բուսական աշխարհի կորուստները չեն սահմանափակվում միայն առանձին բուսատեսակներով: Մասսայական բնույթ են կրում նաև բուսական համակեցությունների (ասոցիացիաների և ֆորմացիաների) ոչնչացումը: Դեռ ավելին, բնաջնջման եզրին են կանգնած անապատային, կիսաանապատային, տափաստանային և ճահճային բուսականության տիպերը, որոնք ընդգրկում են Հայաստանի ֆլորայի մոտ 25 տոկոսը:

Տասնյակ միլիոնավոր տարիների ընթացքում ստեղծված արժեքավոր բուսատեսակները և դրանցով կազմված համակեցությունները մարդու անխոհեմ գործունեության գոհեր չափոր է դառնան: Ֆլորայի և բուսականության հազվագյուտ էլեմենտների պահպանության կոմպեքս միջոցառումների մշակումը և իրագործունակ անհետածգելի խնդիր է մեր հանրապետության համար:

Բնական է, որ հազվագյուտ և անհետացող բուսական համակեցությունների պահպանման «Կարմիր գիրք» ստեղծելու մտահղացումը ԱՊՀ-ում ծագել է հենց մեզ մոտ՝ Հայաստանում: Մեր հանրապետությունում առանձնացված են բուսական համակեցությունների շուրջ 36 ոչ խոշոր հատվածներ, որոնք հույժ պահպանության կարիք ունեն: Դրանք անապատների, կիսաանապատների, ճահիճների, չոր և խոնավ տափաստանների, մարգագետնատափաստանների, ալպյան և ենթալպյան մարգագետինների, անտառների և քարաժայռային բուսականության նմուշներ են, որոնք բուսաշխարհագրական բացառիկ նշանակություն ունեն, իրենց մեջ ընդգրկում են Հայաստանի ֆլորայի կեսից ավելի՝ բնորոշելով մեր հանրապետության բուսական աշխարհի ուրույն դեմքը:

Յազգվագյուտ և անհետացող բուսական համակեցությունների էտալոնային հատվածների առանձնացումն ու պահպանումը չի կարող բացասարար անդրադարձ հանրապետության հողային հաշվեկշռի վրա, քանի որ վերջիններիս զբաղեցրած տարածությունը չի գերազանցում Հայաստանի ընդհանուր տարածքի 3 տոկոսը:

Բնական բուսականության հատվածների պահպանումը, անհայտ բույսերի համեմատությամբ ունի մի շարք առավելություններ: Համրահայտ է, որ էն-

դեմ և ռելիկտ բույսերի մեծ մասը դժվար են կլիմայավարժեցվում և իրենց բնակատեղից բուսաբանական այգի կամ մեկ այլ տեղ տեղափոխելիս ոչնչանում են: Ծառ բուսական համակեցությունների առկայությամբ է պայմանավորված այս կամ այն միջատի կամ կենդանու գոյությունը:

Բավական է ոչնչացնել որդան կարմիրի բնակության բուսուտները, և կոչնչանան Արարատյան դաշտավայրի այդ միջատի գաղութները: Գիլ լճի ջրաճահճային բուսականության ոչնչացմամբ մեր հանրապետության տարածքից անհետացան ավելի քան 30 տեսակի ջրլող թռչուններ:

Ներկայում Նայկական լեռնաշխարհի հազվագյուտ և անհետացող բուսատեսակների և բուսական համակեցությունների պահպանումն իրագործվում է երեք արգելոցների, շուրջ 15 արգելավայրերի և «Սևան» ազգային պարկի միջոցով:

Պետք է նշել, որ մեր արգելոցներում բուսականության պահպանության գործը վաստի հիմքերի վրա է դրված: Ամենուրեք խախտվում է պետականորեն սահմանված հազվագյուտ բույսերի և բուսական համակեցությունների պահպանության ռեժիմը: Մեր արգելոցներում անարգել գործում են անասնապահական ֆերմաները, կատարվում է խոտհունձ և օգտակար բույսերի չնորմավորված հավաք:

Բանալի բառեր – Ֆլորա, բուսական ծածկոց, էրոզիա, բուսական համակեցություններ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նայրապետյան Է. Մ., Ավագյան Մ. Պ., Օպտիմալ կառուցվածքով ագրոլանդշաֆտների ստեղծման հիմնահարցերը Սևանի ավազանում // Երևան, 4-րդ գիտ. կոնֆերանսի նյութեր, «Երկրագործության արդի հիմնախնդիրները», Երևան, 2001
2. Եղոյան Ռ.Շ., Ավագյան Վ. Ա., Քոչինյան Յ. Գ., «Գյուղատնտեսությունը և էկոլոգիան», Վանաձոր, 1999
3. Արյստամով Է. Ա. և դր., Экологические основы природопользования, Москва, 2001
4. Բաննиков А. Г. и др., Основы экологии и охрана окружающей среды. М., Колос, 1999
5. Рамад Ф., Основы природной экологии, Л., Гидрометиздат., 1989
6. Реймерс Н. Ф., Природопользование, М., Мысль, 1990
7. Соколов М. С., Экологизация защиты растений, Пущино, ОНТИ, 1994

8. Казарян В. О., Арутюнян Л. В., Хуршудян Л. А., Григорян А. А., Басегян А. М., Научные основы облесения, озеленения Армянской ССР. Ереван: Изд. АН Арм. ССР. 1974.
9. Калашников А. Ф., Полезащитные лесные полосы. В. кн.: Справочник агролесомелиоратора. М.: Лесная промышленность. 1971.

ОСОБЕННОСТИ РАСПРЕДЕЛЕНИЯ РАСТИТЕЛЬНОГО ПОКРОВА И ПУТИ ИХ ЭФФЕКТИВНОГО ИСПЛЬЗОВАНИЯ И СОХРАНЕНИЯ НА ТЕРИТОРИИ РА

М. П. АВАГЯН

*Доктор сельскохозяйственных наук,
декан факультета естественных наук ГГУ*

Развитие агропромышленности наносит вред живой природе. В нашей республике, вред нанесенный природе, является неизбежным явлением. Человек уничтожает новыественные природные ресурсы - болота, луга, степи, где испокон веков обитали животные и была растительность. Задачи охраны растительного мира требуют, в первую очередь, не нарушать биологический баланс природы и взять под защиту всю биологическую разновидность.

WAYS OF EFFICIENT USE AND PRESERVATION, DISTRIBUTION PECULIARITIES OF VEGITATIVE COVER IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

М. Р. AVAGYAN

*Doctor of agricultural sciences,
Dean of Faculty of Natural Science*

The development of industry directly damages nature. Damages caused to the nature are inevitable for our republic as well. Human beings inevitably destroy the new sections of pristine nature such as: marshes, meadows, prairies, plants and animals living there for centuries.

The preservation issues of flora first of all require not to violate biological balance preserving the whole biodiversity.